ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/24

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Տեխնոգլոբ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի (լիազորագիր՝ տրված 25.01.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.01.2022թ. թիվ 26/26-1/997-2022 գրությամբ «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.01.2022թ. թիվ ՊՆ/02/163-2022 գրության հիման վրա, 20.01.2022թ. թիվ 26/26-1/997-

2022 գրությամբ նախաձեռնել է «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Տեխնոգլոբ» ՍՊԸ-ն, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ, հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Տեխնոգլոբ» ՍՊ ընկերությանը (հետայսու՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգի դեմ առարկում ենք:

Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու՝ Պատվիրատու) գործողություններն իրավաչափ չեն, քանի որ ընթացակարգ նախաձեռնելու համար բացակայում է անհրաժեշտ իրավական հիմքը:

Փաստեր.

1. Պատվիրատուի և Ընկերության միջեւ 17.08.2021թ կնքվել է մատակարարման թիվ ԳՀԱՊՁԲ-21-22/5-1 պայմանագիրը, համաձայն որի Մատակարարը պարտավորվել է Պատվիրատուին մատակարարել (Եռոտանի (Շտատիվ) (Հրետանային բուսոլի եւ Կ-1 կոլիմատորի եռոտանի)) ապրանք մինչեւ 31.10.2021 թվականը:

2. 17.08.2021թ կնքված Պայմանագրի մատակարարման ժամկետը կողմերի համաձայնությամբ երկարեցվել է մինչեւ 30.11.2021թ նկատի ունենալով, որ մատակարարվող ապրանքի ամբողջ խմբաքանակն Ընկերությունը ձեռք էր բերել, սակայն տեղափոխման հետ կապված ծագել էին անհաղթահարելի խնդիրներ:

3. 17.12.2021 թվականին Ընկերությունը դիմել է Պատվիրատուին հայտնելով, որ մատակարարվող ապրանքը Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու առնչությամբ ծագած խնդիրները 30.11.2021թ դրությամբ դեռեւս չեն հաղթահարվել, ուստի՝ մատակարարվող ապրանքից 20 հատը Հայաստանի Հանրապետություն է մուտք եղել 2021 թվականի դեկտեմբեր ամսի առաջին տասնօրյակում եւ պատրաստակամ է իրականացնել մատակարարում, եթե դեռեւս Պատվիրատուի մոտ կարիքն առկա է:

4. 17.12.2021թ գրության վերաբերյալ Պատվիրատուն դիրքորոշում չի հայտնել եւ 12.01.2022 թվականին ծանուցվել ենք 17.08.2021թ պայմանագիրը 2.1.7.1 կետի բ)

ենթակետի հիմքով միակողմանի լուծելու մասին, սահմանված ժամկետում մատակարարում չիրականացնելու պատճառաբանությամբ:

Պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուն հավաստվել է, որ մատակարարվող ապրանքի ներկրումն իրականացվում է այլ կազմակերպության միջոցով եւ տեղափոխման ընթացքում ծագել են խոչընդոտներ, որոնք անկանխելի են եղել ինչպես տեղափոխող կազմակերպության այնպես էլ Ընկերության համար:

5. 17.08.2021թ կնքված պայամագրի մատակարարման ժամկետը եղել է 30.11.2021 թվականը, 17.12.2021 թվականին Ընկերությունը գրությամբ հայտնել է, որ պատրաստ է մատակարարվող ապրանքից մատակարարել 20 հատ:

Առնվազն 17.12.2021 թվականին Պատվիրատուի համար հայտնի է եղել, որ 30.11.2021 թվականի դրությամբ Ընկերություն դեռեւս ապրանք չի մատակարարել:

Իրավական հիմք.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի «հետայսու՝ Կարգ» 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 45-րդ կետով սահմանված՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները լիազոր մարմնին տրամադրելը պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ միայն կարող ենք փաստել իրավահարաբերության առաջացումը: Հակառակ դեպքում, Կարգի 45-րդ կետով

սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին եւ այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնի այլ չիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի եւ արտահայտությունների տառացի նշանակությունը:

Սույն գործի փաստերի համաձայն, թեև Ընկերությունը հայտնել է, որ պայմանագրով սահմանված ժամկետում ապրանքը չմատակարարելու համար եղել են անկանխելի եւ անհաղթահարելի իրավիճակ, այնուամենայնիվ, եթե Պատվիրատուն եզրահանգել է, որ առկա է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքերը, ապա այդ հիմքերը Պատվիրատուի համար ի հայտ են եկել դեռևս 30.11.2021 թվականին: Պատվիրատուն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով տվյալները եւ փաստաթղթերը ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 13.01.2022 թվականին:

Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը, որպիսի պարագայում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված պատասխանատվությունը չի կարող ծագել և հանգեցնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանում է՝ Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Պետական մարմինների գործողությունները, որոնք դուրս են օրենսդրի եւ գործադիրի կողմից սահմանված լիազորությունների շրջանակից, չեն կարող իրավական հետեւանք առաջացնել իրավահարաբերության սուբյեկտի համար, մինչդեռ, այն պատասխանատվության հիմք կարող է հանդիսանալ գործողության կրողի համար:

Վերլուծելով վերոգրյալ փաստերը կարգավորող նորմերի համատեքստում՝ արձանագրում ենք, որ Պատվիրատուն չի ղեկավարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով եւ Կարգի 45-րդ կետով:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության գրության հիման վրա «Տեխնոգլոբ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը»:

«Տեխնոգլոբ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/24 ընթացակարգի շրջանակներում 26.01.2022թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 13.01.2022թ. թիվ ՊՆ/02/163-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ի միջև 17.08.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-22/5-1 գնման պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 7-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է N ԳՀԱՊՁԲ-21-22/5-1 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 12.01.2022թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են վերոնշյալ մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/24 ընթացակարգի շրջանակներում 26.01.2022թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/24 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/24 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ի միջև 17.08.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-22/5-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի

մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածի Գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

Գնման առարկայի				
Հ/Հ	անվանումը	չ/մ	քանակը	Մատակարարումը՝ 2021թ. ըստ համապատասխան եռամսյակների
				4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 31.10.2021թ.
1	Եռոտանի (Շտատիվ) (Հրետանային բուսոլի և Կ-1 կոլիմատորի եռոտանի)	հատ	100	100

3. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 29.10.2021թ. կնքվել է N 1 փոփոխությունը, որի 1.1 կետի համաձայն՝ Պայմանագրին կից գնման ժամանակացույցում կատարվել է փոփոխություն, որը ներկայացված է սույն փոփոխությանը կից N 1 Հավելվածով:

4. N 1 փոփոխությանը կից Հավելված 1-ի համաձայն՝ ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.11.2021թ.:

5. «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված 17.12.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ԳՀԱՊՁԲ-21-22/5-1 պայմանագրով նախատեսված ապրանքները Եռոտանի (Շտատիվ) (Հրետանային բուսոլի և Կ-1 կոլիմատորի եռոտանի)) ձեռք են բերվել մատակարարման նպատակով մեր կազմակերպության կողմից:

Տեղափոխման ընթացքում առաջացած ֆորսմաժորի արդյունքում ՀՀ տարածք է հասել խմբաքանակի մի մասը 20 հատ, (անհրաժեշտության դեպքում պատրաստ ենք տրամադրել վերոնշյալը հավաստող համապատասխան տեղեկանք, տրամադրված տեղափոխող կազմակերպության կողմից):

Խնդրում ենք լուծել վերոնշյալ պայմանագիրը, ողջ խմբաքանակի 2021թ. ընթացքում տեղափոխման անհնարինության հետ կապված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապրանքի ձեռք բերման կարիքը պատասխանատու ստորաբաժանման մոտ չի վերացել և մեր տրամադրության տակ

առկա են 20 հատ շահագործման համար պիտանի խմբաքանակ, առաջարկում ենք այն նվիրաբերել պատասխանատու ստորաբաժանման կարիքների համար, պայմանագրով նախատեսված տուգանքները չկիրառելու դիմաց»:

6. Հայտը նախագծած ներկայացուցիչ ՀՀ ՋՈՒ ՀԶ և ՀՎ պլանավորման և հաշվառման բաժնի պետի կողմից 24.12.2021թ. կազմվել է պայմանագրի կատարման մասին թիվ 21/119 եզրակացությունը, համաձայն որի 17.12.2021թ. դրությամբ պայմանագրով նախատեսված ապրանքները չեն մատակարարվել:

7. Պատվիրատուն «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ին ուղղված 11.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«(...) Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 7-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը: (...)»:

8. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 12.01.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2022թ. թիվ 26/26-1/997-2022 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 13.01.2022թ. թիվ ՊՆ/02/163-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և

ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության և «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ի միջև 17.08.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-22/5-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածի Գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

Գնման առարկայի				
Հ/Հ	անվանումը	չ/մ	քանակը	Մատակարարումը՝ 2021թ. ըստ համապատասխան եռամսյակների
				4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 31.10.2021թ.
1	Եռոտանի (Շտատիվ) (Հրետանային բուսոլի և Կ-1 կոլիմատորի եռոտանի)	հատ	100	100

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 29.10.2021թ. կնքվել է N 1 փոփոխությունը, որի 1.1 կետի համաձայն՝ Պայմանագրին կից գնման ժամանակացույցում կատարվել է փոփոխություն, որը ներկայացված է սույն փոփոխությանը կից N 1 Հավելվածով:

N 1 փոփոխությանը կից Հավելված 1-ի համաձայն՝ ապրանքի մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 30.11.2021թ.:

«Տեխնոգլոբ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղղված 17.12.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ ԳՀԱՊՁԲ-21-22/5-1 պայմանագրով նախատեսված ապրանքները Եռոտանի (Շտատիվ) (Հրետանային բուսոլի և Կ-1 կոլիմատորի եռոտանի)) ձեռք են բերվել մատակարարման նպատակով մեր կազմակերպության կողմից:

Տեղափոխման ընթացքում առաջացած ֆորսմաժորի արդյունքում ՀՀ տարածք է հասել խմբաքանակի մի մասը 20 հատ, (անհրաժեշտության դեպքում պատրաստ ենք տրամադրել վերոնշյալը հավաստող համապատասխան տեղեկանք, տրամադրված տեղափոխող կազմակերպության կողմից):

Խնդրում ենք լուծել վերոնշյալ պայմանագիրը, ողջ խմբաքանակի 2021թ. ընթացքում տեղափոխման անհնարինության հետ կապված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապրանքի ձեռք բերման կարիքը պատասխանատու ստորաբաժանման մոտ չի վերացել և մեր տրամադրության տակ առկա են 20 հատ շահագործման համար պիտանի խմբաքանակ, առաջարկում ենք այն նվիրաբերել պատասխանատու ստորաբաժանման կարիքների համար, պայմանագրով նախատեսված տուգանքները չկիրառելու դիմաց»:

Հայտը նախագծած ներկայացուցիչ ՀՀ ԶՈՒ ՀԶ և ՀՎ պլանավորման և հաշվառման բաժնի պետի կողմից 24.12.2021թ. կազմվել է պայմանագրի կատարման մասին թիվ 21/119

եզրակացությունը, համաձայն որի 17.12.2021թ. դրությամբ պայմանագրով նախատեսված ապրանքները չեն մատակարարվել:

Պատվիրատուն «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ին ուղղված 11.01.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«(...) Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. հունվարի 7-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը: (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 12.01.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

<u>բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,</u>

Պայմանագրի 6.6-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ վերոգրյալի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 17.08.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-21-22/5-1» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված փաստական հանգամանքներին, մասնավորապես՝ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Սույն գործի փաստերի համաձայն, թեև Ընկերությունը հայտնել է, որ պայմանագրով սահմանված ժամկետում ապրանքը չմատակարարելու համար եղել են անկանխելի և անհաղթահարելի իրավիճակ, այնուամենայնիվ, եթե Պատվիրատուն եզրահանգել է, որ առկա է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքերը, ապա այդ հիմքերը Պատվիրատուի համար ի հայտ են եկել դեռևս 30.11.2021 թվականին: Պատվիրատուն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով տվյալները և փաստաթղթերը ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 13.01.2022 թվականին:

Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը, որպիսի պարագայում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված պատասխանատվությունը չի կարող ծագել և հանգեցնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն»:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.***

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ ***Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ պարտավորությունները ծագում են պայմանագրից, հետևաբար՝ պայմանագրով էլ սահմանվում են պարտավորությունները կատարելու կարգն ու ժամկետները և դրանց մասով խախտումներն էական համարվելու պայմաններն ու դեպքերը, տվյալ դեպքում Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերությամբ նախատեսված էական խախտման փաստը վրա հասել 30.12.2021թ., որի հիման վրա Պատվիրատուն լուծել է

<u>Պայմանագիրը և 12.01.2022թ. Տեղեկագրում հրապարակել Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:</u>

Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 45-րդ կետի դրույթով, ***<u>Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ներկայացրել է 13.01.2022թ. թիվ ՊՆ/02/163-2022 գրությամբ:</u>***

Այսպիսով՝ Պայմանագրի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը***: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ <u>ծանուցումը</u>, սույն կետով սահմանված <u>հրապարակվելուն հաջորդող օրվանից</u>:***

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: ***Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ <u>ծանուցումը</u> տեղեկագրում <u>հրապարակվելուն հաջորդող օրվանից:</u>*** Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ արձանագրում եմ, որ «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ***հիմքերն ի հայտ են եկել*** Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ***ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից***, երբ Պայմանագիրը կնքած անձը համարվել է ***պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, այսինքն՝ 13.01.2022թ., հետևաբար Ընկերության կողմից վկայակոչված վերը շարադրված դիտարկումը անհիմն է և զուրկ որևէ իրավական հիմքից:***

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ 17.08.2021թ կնքված պայմանագրի մատակարարման ժամկետը եղել է 30.11.2021 թվականը, 17.12.2021 թվականին Ընկերությունը գրությամբ հայտնել է, որ պատրաստ է մատակարարվող ապրանքից մատակարարել 20 հատ, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ նշված գրությամբ Ընկերությունը Պատվիրատուին խնդրել է լուծել վերոնշյալ պայմանագիրը, ողջ խմբաքանակի 2021թ. ընթացքում տեղափոխման անհնարինության հետ կապված և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապրանքի ձեռք բերման կարիքը պատասխանատու ստորաբաժանման մոտ չի վերացել և իրենց տրամադրության տակ առկա են 20 հատ շահագործման համար պիտանի խմբաքանակ, առաջարկել է այն նվիրաբերել պատասխանատու ստորաբաժանման կարիքների համար, պայմանագրով նախատեսված տուգանքները չկիրառելու դիմաց, որպիսի իրավական կարգավորում գնումների մասին ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.01.2022թ. թիվ 26/26-1/997-2022 գրությամբ «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Տեխնոգլոբ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների

հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**